ԻՔՍ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԻ ՄԻ ՆՈՐ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Վերջերս իքս ճառագայթները գործադրութիւն գտան և շերամապահութեան մէջ, որ ահագին գործնական նշանակութիւն ունի ճիշտ որոշելու և ընտրելու համար, թէ որ բոժոժներից պիտի դուրս գան արու և որ բոժոժներից էգ թիթեռներ։ Յայտնի է, որ մինչև օրս դժուար էր արտաքուստ որոշել այդ միակ միջոցը, որով մօտաւորապէս զանազանում էին բոժոժների համեմատական ծանրութիւնն էր, որովհետև դիտուած է, որ ընդհանրապէս էգ թիթեռի բոժոժն աւելի ծանր է, քան թէ արուինը։ Սակայն այդ միջոցը միշտ ցանկալի հետևանքի չէ հասնում, շերամապահները յաճախ սխալւում են և սխալը միանգամայն վնաս է հասցնում նրանց, որոնք ցանկութիւն ունին սերմ ստանալ, իսկ սերմը ստացւում է միայն էգ թիթեռներից։

Եւ ահա, այդ տեսակէտից ուշադրութեան արժանի են Ցեստնոարի և Դեւրի վերջերս կատարած դիտողութիւնները, որոնք ապացուցանում են, որ իքս ճառագայթների օգնութեամբ միանգամայն հնարաւոր է սովորական շերամի որդի (Bombyx mori) արու բոժոժը զանազանել էգ բոժոժից։ Բանն այն է, որ ինչպէս բոժոժը, նոյնպէս և նրա մէջ զարգացող հարսնեակի մարմինը բոլորովին ազատ անց են կացնում իրենց միջից իքս ճառագայթները։ Ընդհակառակն այն ձուերը, որ թիթեռներն ածում են բոժոժից դուրս գալուց յետոյ և որոնք հասունանում են, երբ թիթեռը դեռ ևս բոժոժի մէջն է, պարունակում են իրենց մէջ բաւական քանակութեամբ հանքային մասնիկներ (աղեր), որոնք անթափանցիկ են այդ ճառագայթների համար։ Այդպիսով բաւական է ունենալ Ռեօնտգենի ճառագայթների միջոցով հանած բոժոժի լուսանկարը, որպէս զի կարելի լինի ճիշտ զանազանել երկու տեսակ բոժոժները։ Այս ուղղութեամբ կատարած բազմաթիւ փորձերը պարզեցին հետևեալ հետաքրքիր երևոյթը։ Այս բոժոժներից ստացուած լուսանկարի վրայ նշմարւում է բոժոժի և նրա մէջ ամփոփած հարսնեակի հաղիւ հազ նշմարելի ուրուագիծը, որ

տպացոյց է, որ մարմնի բոլոր մասերը իրենց միջից միակերպ լաւ անց են կացնում Ռեոնտգենի ճառագայթները. ընդհակառակն էգ բոժոժի նկարի ուրուագծի այն մասում, ուր միջատի փորն է, նկատւում են աչքի ընկնող բազմաթիւ մութ կէտեր, որոնցով իմացւում է, որ այնտեղ կան ձուերը։

Ռեոնտգենի ճառագայթների այս նորագոյն գործադրութիւնը ահագին նշանակութիւն ունի, ոչ միայն վերը յիշուած պատճառով, այլ նաև նրա համար, որ արուի բոժոժները, ըստ որակի, տալիս են անհամեմատ աւելի լաւ մետաքս, քան թէ էգերինը։ Բացի այս՝ երբ միանգամ հնարաւոր է լինում անսխալ կերպով որոշել էգի բոժոժը արուի բոժոժից, դորանով արուի ծանր բոժոժները, որոնք առաջ էգի տեղ ընդունուելով թողնւում էին սերմի համար, այժմ աղատւում են փչանալու վտանգից և այդպիսով ստացած մետաքսի քանակութիւնը ևս աւելանում է։

Թարգ. Ա. Ս.

ԵՐԵՔ ՔԱՐՈԶ

Խաչակապ գիւղում երեք քահանայ կային։

Մեծ պասի մի կիրակի երեքն էլ միմեանց ետևից քարոզ խօսեցին։ Առաջինը սկսեց այսպէս.

—Սիրելի ժողովուրդ, մ'հիկս [1]) գիտում էք ի՞նչ կայ, սուրբ Աւետարանի ղրաղին կիրում ա թա«ղուացարուք, սրբեցարուք» մ'հիկս, սիրելիք, մենք սրանից ի՞նչ պանքհսկանալ.—մ'թամ [2]) թէ մեծ պաս ա եկել. պտի լուանուանք ու սրբուփուենք. սրա հըմար էլ ես ձեզ աշխարօրէն մի լաւ առակ կասեմ, դէ լսեցէ՛ք։—Արջն որ արջնայ, քառասուն օր իր ծակումը կենումայ ու քառասուն օրից ետոյ դուս ա կալիս իր ծակիցը ու քինում մի շըռոթանի [3]) տակ մանում, պիրանը բաց անում, ջուրը պիրանովը նի ա դառնում, ետքովը դուս դառնում։ տէնց անումա թա ինչա մէջ ղՀլը թըմզի և փորումը տանձի կձեպ չի մնայ, որ նորն [4]) ու

---

1. այժմ. 2. իբր. 3. ջրվէժ. 4. նուռը.